600.0109.23.04.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2019 թվականի №109Ա

ք. Երևան

«ՎԵՌԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378-Ն որոշմամբ սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների (այսուհետ՝ Կանոններ)՝

- 29-րդ կետի համաձայն՝ հիդրանտով մատակարարված խմելու ջրի քանակը հաշվարկվում է միայն առևտրային հաշվառքի սարքի միջոցով,
- 86-րդ կետի համաձայն՝ Կանոնների 29-րդ կետով սահմանված դրույթը հիդրանտի մասով ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից,
- 89-րդ կետի համաձայն՝ 2019 թվականի հունվարի 1-ից ցայտաղբյուրով մատակարարված խմելու ջրի քանակի հաշվառումը պետք է իրականացվի առևտրային հաշվառքի սարքի միջոցով: Այս նպատակով առևտրային հաշվառքի սարքը ձեռք է բերում և տեղակայում մատակարարը՝ իր հաշվին,

բ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2019 թվականի փետրվարի 21-ից «Վեռլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիդրանտով և ցայտաղբյուրով մատակարարված խմելու ջրի քանակի հաշվառումը Կանոններով սահմանված պահից՝ 2019 թվականի հունվարի 1-ից, առևտրային հաշվառքի սարքի միջոցով իրականացման փաստի ուսումնասիրության նպատակով,

գ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2019 թվականի փետրվարի 28-ի №ԳԳ/3542 գրությամբ հայտնել է, որ հիդրանտով և ցայտաղբյուրով մատակարարված խմելու ջրի քանակի հաշվառումը Կանոններով սահմանված պահից՝ 2019 թվականի հունվարի 1-ից, առնտրային հաշվառքի սարքի միջոցով իրականացնելու պահանջի կատարման համար առաջացել են լուրջ խոչընդոտներ, որոնց կարգավորման նպատակով դեռևս 2018 թվականի նոյեմբերից Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի (այսուհետ՝ Ջրային կոմիտե) հետ սկսվել են «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրում (այսուհետ՝ Վարձակալության պայմանագիր) փոփոխություններ կատարելու գործընթաց,

դ) Հանձնաժողովը 2019 թվականի մարտի 25-ի №ՄՄ/2.3-58/440-19 գրությամբ դիմել է Ջրային կոմիտե՝ Վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու գործընթացի և դրա ավարտի կանխատեսվող ժամկետի վերաբերյալ փոխօգնության կարգով տեղեկատվություն ստանալու նպատակով, որի հիման վրա վարչական վարույթի ժամկետը երկարաձգվել է 30 օրով,

ե) Ջրային կոմիտեն 2019 թվականի ապրիլի 16-ի №01/08/1519-19 գրությամբ հայտնել է, որ Ընկերության հետ համատեղ մշակել են Վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծ, որով նախատեսվում է սահմանել հիդրանտով և ցայտաղբյուրով մատակարարված խմելու ջրի քանակի հաշվառման այլ եղանակներ: Նշվել է նաև, որ ներկայումս առաջացել է համաձայնագրի նախագծի վերաբերյալ անկախ տեխնիկական աուդիտորի դիրքորոշումը ստանալու անհրաժեշտություն, ինչի մասին Հանձնաժողովը լրացուցիչ կտեղեկացվի,

զ) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը չի կատարել Կանոնների 29-րդ և 89-րդ կետերով սահմանված պահանջները, այն է՝ հիդրանտով և ցայտաղբյուրով մատակարարված խմելու ջրի քանակի հաշվառումը Կանոններով սահմանված պահից՝ 2019 թվականի հունվարի 1-ից, չի իրականացրել առնտրային հաշվառքի սարքի միջոցով: Իսկ Ընկերության պատճառաբանությունները չեն կարող դիտվել որպես թույլ տրված խախտումների օբյեկտիվ պատճառներ և ազատել վերջինիս պատասխանատվությունից,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Կանոնների 29-րդ և 89-րդ կետերը խախտելու համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝ Ջրային կոմիտեի հետ համատեղ քննարկելուց և Վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելուց հետո մինչև 2019 թվականի օգոստոսի 1-ը դիմել Հանձնաժողով՝ Կանոններում փոփոխություններ կատարելու հարցը դիտարկելու նպատակով:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
23 ապրիլի 2019թ.